ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կ. Դեմիրճյանի անվ. մետրոպոլիտենի պահպանության բաժնի ոստիկանության վաշտի 2-րդ դասակի հրամանատար, ոստիկանության ավագ լեյտենանտ

Քրեական հետապնդման վաղեմությունը որպես քրեական իրավունքի ինստիտուտ հայտնի է վաղ ժամանակներից: Այն կիրառվել է դեռևս Հին հռոմեական կայսրությունում[1]:

Ներկայումս քրեական հետապնդման վաղեմության ինստիտուտն առկա է ռոմանագերմանական իրավական համակարգի գրեթե բոլոր պետություններում, սակայն որոշ երկներում այն ոչ թե քրեաիրավական, այլ քրեադատավարական ինստիտուտ է (Ֆրանսիա): Անգլոսաքսոնական համակարգի երկրներում վաղեմության ինստիտուտը ավանդաբար բացակայում է, միայն ԱՄՆ որոշ նահանգների օրենսդրությամբ այն ունի սահմանափակ կիրառություն. մասնավորապես՝ նվազ վտանգավոր հանցագործությունների (միսդիմինորների) համար սահմանված վաղեմության ժամկետը երկու տարի է: Կանադայում նույնպես վաղեմության ժամկետ է սահմանված միայն ոչ ծանր հանցագործությունների համար, և այն տասը տարի է[2]:

ԱՊՀ երկրների քրեական օրենսդրությամբ սահմանված է, որ վաղեմության ժամկետները հաշվարկվում են հանցանքը կատարելու օրվանից մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը (Լիտվայի քրեական օրենսգրքով՝ մինչև մեղադրական դատավճռի կայացումը): Բելառուսի քրեական օրենսգրքում հատուկ շեշտված է, որ քրեական գործի հարուցումը չի ընդհատում վաղեմության ժամկետների հոսքը:

Դրան հակառակ՝ Ավստրիայի, Բրազիլիայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Դանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Մեքսիկայի, Պերուի, Լեհաստանի, Թուրքիայի, Էստոնիայի քրեական օրենսգրքերով սահմանված է, որ վաղեմության ժամկետները հաշվարկվում են մինչև քրեական հետապնդման սկիզբը կամ ընդհատվում են այդ պահին:

Ընդ որում, վերոնշյալ պետություններում քրեական հետապնդման սկիզբը կարգավորված է տարբեր կերպ:

---

[1] Տե՛ս Сравнительное уголовное право. Учебник / Иванов А.М., Корчагин А.Г. - Владивосток, 2002, էջ 189:

[2] Տե՛ս Малиновский А. А. Сравнительное правоведение в сфере уголовного права. М.: Международные отношения, 2002, էջ 245:

Այսպես, Գերմանիայի քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետն ընդհատվում է անձի՝ որպես կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ստացածի նկատմամբ ցանկացած դատավարական գործողության կատարմամբ:

Բուլղարիայի քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված է, որ քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետի ընդհատման պահ է համարվում իրավասու մարմինների կողմից տվյալ անձի նկատմամբ անմիջականորեն կատարված ցանկացած դատավարական գործողություն, որն ուղղված է նրա քրեական հետապնդմանը[3]:

Վրաստանի քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածի երկրորդ մասում սահմանված է, որ քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետի ընդհատման պահ է համարվում անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահը:

Իսպանիայի քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման վաղեմության ժամկետները հոսում են մինչև քրեական գործի հարուցման պահը[4]:

Լատվիայի քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի երկրորդ մասը որպես վաղեմության ժամկետների հոսքի վերջնական պահ նշում է մեղադրանքի առաջադրումը:

Ընդ որում, Բուլղարիայի, Բրազիլիայի, Հունգարիայի, Գերմանիայի, Թուրքիայի, Էստոնիայի քրեական օրենսդրությամբ սահմանված է, որ վաղեմության ժամկետների հոսքի ընդհատման դեպքում դրանք սկսում են հաշվարկվել վերստին, ընդհատման պահից[5]:

Ավստրիայի քրեական օրենսդրությունը սահմանում է, որ վաղեմության ժամկետների մեջ չի մտնում այն հատվածը, որի ընթացքում իրականացվել է տվյալ քրեական գործի դատաքննությունը, իսկ Վրաստանի, Իսպանիայի, Լեհաստանի քրեական օրենսդրության համաձայն՝ վաղեմության ժամկետների մեջ չի մտնում ամբողջ քրեական գործով դատավարության ժամանակահատվածը՝ ներառյալ մինչդատական վարույթը:

Ադրբեջանի, Ռուսաստանի, Վրաստանի քրեական օրենսգրքերի համաձայն՝ եթե անձը կատարում է նոր հանցագործություն, ապա նախորդ հանցագործության համար վաղեմության ժամկետի հոսքը չի ընդհատվում. յուրաքանչյուր հանցագործության համար վաղեմության ժամկետը հաշվարկվում է ինքնուրույն: Իսկ, օրինակ, Լիտվայի, Լատվիայի, Մակեդոնիայի, Պերուի քրեական օրենսդրության համաձայն՝ անձի կողմից նոր հանցանք կատարելու դեպքում նախորդ հանցանքի համար վաղեմության ժամկետը ընդհատվում է[6]:

Այսպես, Ավստրիայի քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն, եթե վաղեմության ժամկետի ընթացքում անձը կատարում է նոր հանցագործություն, ապա նա չի կարող ազատվել նախորդ և նոր հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, եթե չի լրացել նոր հանցագործության համար սահմանված վաղեմության ժամկետը[7]:

---

[3] Տե՛ս Иванов А. М., Корчагин А. Г. Сравнительное уголовное право. Владивосток, 2001, էջ 169:
[4] Տե՛ս Малиновский А. А. նշվ.աշխատ., էջ 247:
[5] Տե՛ս Иванов А. М., Корчагин А. Г. նշվ. աշխատ., էջ 171:
[6] Տե՛ս Сравнительное уголовное право, էջ 191:
[7] Տե՛ս Уголовный кодекс Австрии. –СПб., Юридический центр Пресс.- 2003, էջ 45:

Բելառուսի, Ղազախստանի, Պերուի քրեական օրենսգրքերի համաձայն՝ վաղեմության ժամկետն ընդհանտվում է, եթե անձը կատարում է նոր դիտավորյալ հանցագործություն, Մոլդովայի քրեական օրենսգրքի համաձայն՝ այնպիսի հանցագործություն, որի համար սահմանված է ազատազրկում երկու տարուց ավելի ժամկետով, իսկ Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի քրեական օրենսգրքով՝ ցանկացած հանցագործություն:

Չինաստանի քրեական օրենսգիրքը սահմանում է, որ եթե վաղեմության ժամկետի ընթացքում անձը կատարում է նոր հանցագործություն, ապա նախորդ հանցագործության համար վաղեմության ժամկետը հաշվարկվում է վերստին՝ նոր հանցանքի կատարման պահից[8]:

Վաղեմության ժամկետների ընդհատումից անհրաժեշտ է տարբերել վաղեմության ժամկետների կասեցումը: ԱՊՀ երկների, Դանիայի, Լիտվայի, Մոնղոլիայի քրեական օրենսդրության համաձայն՝ վաղեմության ժամկետների հոսքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից և դատից: Վաղեմության ժամկետների հաշվարկը նման դեպքերում վերսկսվում է անձի ձերբակալման կամ մեղայականով ներկայանալու պահից: Բելառուսի, Ղազախստանի, Լիտվայի, Մոլդովայի, Ուկրաինայի, Էստոնիայի քրեական օրենսդրությամբ սահմանված են բացառիկ վաղեմության ժամկետներ, որոնք անցնելու դեպքում քրեական պատասանատվությունից կարող է ազատվել նաև քննությունից կամ դատից խուսափող անձը[9]: Իսկ, օրինակ, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 78 հոդվածի 3-րդ մասում վաղեմության ժամկետների կասեցման դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու բացառիկ ժամկետներ սահմանված չեն:

Մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ (Ավստրիա, Գերմանիա, Վրաստան, Մակեդոնիա, Լեհաստան, Չեխիա) սահմանված է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի կասեցման ևս մեկ հիմք: Վաղեմության ժամկետների հոսքն ընդհատվում է, եթե անձը օժտված է քրեական հետապնդման անձեռնմխելիությամբ: Այդ դեպքում վաղեմության ժամեկտի հոսքը վերսկսվում է տվյալ անձին քրեական հետապնդման անձեռնմխելիությունից զրկելու պահից[10]:

Լեհաստանում այդ նորմը բարձրացված է նույնիսկ սահմանադրական մակարդակի, ինչը վկայում է դրա հաուկ քաղաքական-հասարակական նշանակության մասին՝ պայմանավորված Լեհաստանի Ժողովրդավարական Հանրապետության նախկին գործիչների քրեական հետապնդմամբ: Համաձայն Լեհաստանի Սահմանադրության 44-րդ հոդվածի՝ ոչ քաղաքական պատճառներով հետապնդվող հանրային ծառայողների կողմից կամ նրանց ցուցումով կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետների հոսքը կասեցվում է մինչև այդ պատճառների վերացումը[11]:

Տարբեր երկների քրեական օրենսդրությամբ սահմանված են տարբեր վաղեմության ժամկետներ՝ կախված հանցագործության ծանրությունից: Թուրքմենստանի, Էստո-

---

[8] Տե՛ս Уголовный кодекс Китайской Народной Республики.-СПб., Юридический центр Пресс.-2001, էջ 29:

[9] Տե՛ս Малиновский А. А., նշվ. աշխատ., էջ 246:

[10] Տե՛ս Сравнительное уголовное право. Учебник / Иванов А.М., Корчагин А.Г. - Владивосток, 2002., էջ 193:

[11] Տե՛ս Конституции государств Европы. В 3 томах. М., Издательство Норма, 2001, Т.2, էջ 692:

նիայի քրեական օրենսդրությամբ սահմանված է 3 վաղեմության ժամկետ, ԱՊՀ երկրների մեծ մասում, Դանիայում՝ 4, Ավստրիայում, Անդորայում, Ուկրաինայում, Մոլդովայում՝ 5, Բրազիլիայում, Իտալիայում՝ 6, Սան-Մարինոյում՝ 7:

Վաղեմության ժամկետները տատանվում են հետևյալ սահմաններում՝

- Ֆիլիպիններում՝ 2 ամսից 20 տարի,
- Անդորայում, Լատվիայում՝ 6 ամսից 15 տարի,
- Թուրքիայում՝ 6 ամսից 25 տարի,
- Ռուանդայում՝ 1-ից 10 տարի,
- Ավստրիայում, Իսպանիայում՝ 1-ից 20 տարի,
- Լեհաստանում՝ 1-ից 30 տարի,
- Էստոնիայիում՝ 5-ից 10 տարի,
- Ադրբեջանում, Բելառուսում, Ղազախստանում, Ռուսաստանում՝ 2-ից 15 տարի,
- Ալբանիայում, Բրազիլիայում՝ 2-ից 20 տարի,
- Վրաստանում, Մոլդովայում՝ 2-ից 25 տարի,
- Մակեդոնիայում՝ 2-ից 30 տարի,
- Ուզբեկստանում՝ 3-ից 15 տարի,
- Գերմանիայում՝ 3-ից 30 տարի,
- Շվեյցարիայում՝ 2-ից 20 տարի[12]:

Բավականին հետաքրքիր է Հունգարիայի և Պերուի քրեական օրենսդրությամբ տրված կարգավորումը. վաղեմության ժամկետը հավասար է տվյալ հանցագործության համար սահմանված պատժի առավելագույն ժամկետին, սակայն չի կարող պակաս լինել 3 տարուց և գերազանցել 30 տարին (մասնավորապես ցման ազատազրկման դեպքում)[13]:

Ժամանակակակից աշխարհի երկրների մեծ մասում օրենսդրորեն սահմանված է խախաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար վաղեմության ժամկետներ կիրառելու արգելք:

Սակայն, օրինակ, միջազգային իրավական ակտերով սահմանված արգելքներին հակառակ՝ Կոլումբիայի քրեական օրենսդրությամբ ցեղասպանության համար սահմանված է 30 տարի վաղեմության ժամկետ[14]:

Մի շարք երկրներում էլ վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված նաև այլ՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար: Ընդ որում, ԱՊՀ երկրների, Լատվիայի քրեական օրենսդրությամբ վաղեմության ժամկետի կիրառման հարցը թողնված է դատարանի հայեցողությանը, Չինաստանում՝ դատախազության, իսկ Ավստրիայի, Բրազիլիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Թուրքիայի քրեական օրենսդրությամբ նախատեսված այդ պահանջը կրում է իմպերատիվ բնույթ:

Թուրքմենստանի քրեական օրենսգրքի համաձայն՝ վաղեմության ժամկետի կիրառման հարցը թողնված է դատարանի հայեցողությանը ցանկացած առանձնապես ծանր հանցագործության դեպքում:

---

[12] Տե՛ս Малиновский А. А. նշվ. աշխատ., էջ 247:
[13] Տե՛ս Иванов А. М., Корчагин А. Г., նշվ. աշխատ., էջ 191:
[14] Տե՛ս Сравнительное уголовное право, էջ 192:

Չինաստանի քրեական օրենսդրությամբ նախատեսված է, որ եթե հանցագործության կատարումից 20 տարի հետո կհաստատվի անձին քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարությունը, ապա անհրաժեշտ է ստանալ Գերագույն դատախազության համաձայնությունը[15]:

Ավստրիայի քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետները չեն կիրառվում այն հանցագործությունների նկատմամբ, որոնց համար նախատեսված է ցմահ ազատազրկում կամ 10-ից 20 տարի ժամկետով ազատազրկում: Սակայն եթե հանցագործության կատարման պահից անցել է 20 տարի, և վաղեմության ժամկետը ընդհատված չի եղել, ապա ցման ազատազրկում չի նշանակվում[16]:

Բրազիլիայի Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ վաղեմության ժամկետները չեն տարածվում քաղաքացիական և զինվորական զինված խմբերի գործողությունների նկատմամբ, որոնք ուղղված են սահմանադրական կարգի և ժողովրդավարության դեմ:

Հունգարիայի քրեական օրենսդրությամբ վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված ծանրացուցիչ հանգամանքներում սպանության, մարդու առևանգման, մահվան հանգեցրած ահաբեկչության համար:

Գերմանիայի քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված ծանրացուցիչ հանգամանքներում սպանության համար[17]:

Լեհաստանի քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված է, որ վաղեմության ժամկետ չի տարածվում սպանության, ծանր մարմնական վնասվածքների, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական գործունեության ընթացքում կատարվող խոշտանգումների վրա[18]:

Այսպիսով, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի համեմատաիրավական վերլուծության հիման վրա կարող ենք նշել այն հիմնական տարբերությունները, որոնք նկատվում են Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության համապատասխան նորմերի միջև: Դրանք հանգում են հետևյալին՝

1. ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները հաշվարկվում են մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը, մինչդեռ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ վաղեմության ժամկետների հաշվարկման վերջնակետը հիմնականում վերաբերում է դատավարության ավելի վաղ փուլին:

2. ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները ընդհատվում են միայն այն դեպքում, եթե

---

[15] Տե՛ս Иванов А. М., Корчагин А. Г., նշվ. աշխատ., էջ 193:
[16] Տե՛ս Уголовный кодекс Австрии, էջ 46:
[17] Տե՛ս Малиновский А. А., նշվ. աշխատ., էջ 246:
[18] Տե՛ս Уголовный кодекс Республики Польша. Минск, 1998, էջ 102:

անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցագործություն: Մինչդեռ արտասահմանյան երկրների մեծ մասում վաղեմության ժամկետների ընդհատման հիմքը ցանկացած տեսակի հանցագործություն կատարելն է:

3. ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները կասեցվում են միայն այն դեպքում, եթե անձը խուսափում է քննությունից և դատից: Ընդ որում, նույնիսկ այդ դեպքում ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված է քրեական պատասխանատվությունից ազատելու բացառիկ ժամկետներ՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար 10 տարի, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործության համար՝ 20 տարի: Մինչդեռ որոշ արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերում որպես վաղեմության ժամկետի կասեցման հիմք նշված է նաև անձի՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվելու հանգամանքը: Հատկանշանական է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածում որպես քրեական գործով վարույթի կասեցման հիմք նշված են ոչ միայն մեղադրյալի՝ քննությունից և դատից խուսափելը, այլև քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվելն ու ծանր հիվանդությունը, որոնք նույնպես նպատակահարմար է նախատեսել որպես վաղեմության ժամկետների կասեցման հիմքեր:

4. ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները երբեմն ավելի կարճ են, քան տվյալ հանցագործության համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը, մինչդեռ շատ արտասահմանյան երկրներում սահմանված են համեմատաբար ավելի երկար վաղեմության ժամկետներ, որոնց, որպես կանոն, հավասար են տվյալ հանցագործության համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետին կամ նույնիսկ գերազանցում են այն:

INSTITUTION OF EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY IN THE CRIMINAL LAW OF FOREIGN COUNTRIES

Anna KHACHATRYAN
Senior Lieutenant of Police, Commander of the Second Platoon of the Police Company, Security Department of the Underground Station after Karen Demirchyan of Yerevan Police Department

Article from employing the method of comparative law analysis is differences of legal regulation of the order of calculating the period of limitation, the grounds for the suspension and interruption of limitation and restriction of the period of limitation according to the Penal Codes Of Armenia and some foreign countries.

Based on the results of the comparative-legal analysis of the relevant rules of the author highlights the differences of the limitation periods in criminal law of the Republic of Armenia and foreign countries and sets out some suggestions on how to improve the relevant provisions of the criminal law of the Republic of Armenia.

ИНСТИТУТ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В УГОЛОВНОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ ЗАРУБЕЖНЫХ СТРАН

Анна ХАЧАТРЯН
Командир второго взвода полицейской роты общественные охраны метрополитена имени К. Демирчяна, старший лейтенант

В статье с приминением метода сравнительно-правового анализа представляются различия правового регулирования порядка исчисления сроков давности, оснований прерывания и приостановления течения сроков давности, а также ограничений применения сроков давности согласно Уголовным кодексам Республики Армения и некоторых зарубежных стран.

По результатам сравнительно-правового анализа соответствующих норм автор выделяет различия института сроков давности в уголовном законодательстве Республики Армения и зарубежных стран и излагает некоторые предложения по усовершенствованию соответствующих норм уголовного законодательства РА.

Բանալի բառեր – Վաղեմության ժամկետ, քրեական պատասխանատվությունից ազատել, համեմատաիրավական վերլուծություն, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություն, ՀՀ քրեական օրենսգիրք, վաղեմության ժամկետների տևողություն, վաղեմության ժամկետների կասեցում և ընդհատում

Keywords: periods of limitation, exemption from criminal liability, comparative-legal analysis, the criminal legislation of foreign countries, the Criminal Code of the Republic of Armenia, the duration of limitation periods, the suspension and interruption of limitation periods

Ключевые слова: сроки давности, освобождение от уголовной ответственности, сравнительно-правовой анализ, уголовное законодательство зарубежных стран, уголовный кодекс Республики Армения, длительность сроков давности, приостановление и прерывание сроков давности